ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 դեկտեմբերի 2025 թվականի N 1806 - Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ և 9-րդ հոդվածների 5-րդ մասերը, «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ մարզ Գեղարքունիք, համայնք Գավառ, գյուղ Ծովազարդ հասցեում գտնվող 13,404,068.0 դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով 162 քառ. մ մակերեսով սպասարկման կենտրոնը, ինչպես նաև դրա զբաղեցրած, օգտագործման և սպասարկման համար հատկացված 1,5 հեկտար մակերեսով հողամասը (29.08.2025 թվականին տրված սեփականության վկայական՝ N 29082025-05-0030, այսուհետ՝ գույք) ամրացնել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությանը:

2. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարին (այսուհետ՝ նախարար)՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա

ժամկետում իրականացնել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի միակողմանի ընդունման և հաշվառման աշխատանքները:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքն անորոշ ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (գրանցման համար՝ 35.210.00952/2002-07-26, այսուհետ՝ կազմակերպություն)՝ կազմակերպության կանոնադրական գործառույթներին համապատասխան գործունեություն իրականացնելու համար:

4. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված աշխատանքների ավարտից հետո երկամսյա ժամկետում կազմակերպության հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի անհատույց օգտագործման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր)՝ դրանում նախատեսելով, որ պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման կազմակերպության միջոցների հաշվին:

5. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությանը՝ սույն որոշման 4-րդ կետում նշված աշխատանքներին զուգահեռ օրենսդրությամբ սահմանված կարգով, ըստ անհրաժեշտության, իրականացնել գույքի սահմանների ճշգրտման ուղղությամբ համապատասխան աշխատանքներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

11.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ